Արձանագրություն N 2

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-(17/3)-15/9 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար հակահրդեհային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

04 մայիսի 2017 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյանը, անդամներ՝ Միհրան Սարդարյանը, Գայանե Օսիպյանը, Արթուր Եղիազարյանը և քարտուղար՝ Վարդան Նավասարդյանը:

Բացակայում էր Դոնարա Հարությունյանը:

Օրակարգ

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-(17/3)-15/9 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-(17/3)-15/9 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լևոն Հարությունյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին՝

- հայտ է ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցը՝

Հ/Հ	Մասնակցի անվանումը և գտնվելու վայրը «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ ՀՀ ք. Երևան, Բաղրամյան 76/3 ԱԱՀ վճարող Գնային առաջարկը, առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/	Նախահաշվային գին
1	1 289 833	1 575 600

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ-ին՝
  - ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀԿԱ-ՊԵԿ-ՇՀԾՁԲ-(17/3)-15/9 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

<u>Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:</u>

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լևոն Հարությունյան

անդամներ _____ Միհրան Սարդարյան

_____ Գայանե Օսիպյան

_____ Արթուր Եղիազարյան

քարտուղար _____ Վարդան Նավասարդյան